



ՀՀ գլխավոր դատախազություն
 ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանին
 ք.Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փ. 5

Պատճենը՝ ՀՀ Ոստիկանություն
 Ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանին
 ք.Երևան, 0025, Նալբանդյան փ. 130

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն հաղորդման համար հիմք է հանդիսացել պատմամշակութային հուշարձան-շենքը քանդելու փաստը, որի վերաբերյալ վերջին օրերին հաճախացել են մամուլի հրապարակումները և խնդիրն ունի հանրային հնչեղություն¹:

Խոսքը վերաբերում է մայրաքաղաքի պատմական կառույցներից մեկի՝ Տերյան 11 հասցեում գտնվող Աֆրիկյանների բնակելի տանը, որը կիսով քանդված է և գտնվում է ոչնչացման վտանգի տակ: Նշված տունը 19-րդ դարավերջի - 20-րդ դարասկզբի կառույց է և, որպես հանրապետական նշանակության հուշարձան, ընդգրկված է ՀՀ կառավարության 07.10.2004թ. թիվ 1616-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում:

ՀՀ Կառավարության որոշմամբ Տերյան 11 հասցեում գտնվող պատմամշակութային հուշարձանի համարվող տան տարածքը ճանաչվել է բացառիկ գերակա հանրային շահ և կառուցապատման իրավունքով տրվել «Դվին» ՍՊԸ-ին, որի իրավահաջորդն այժմ «Միլենիում կոնստրակշն» ՍՊԸ-ն է: Ըստ մամուլում շրջանառվող լուրերի՝ վերջինս այս տարածքում բազմաբնակարան շենք կառուցելու թույլտվություն է ստացել և շինարարության իրավունք ձեռք բերելուց հետո՝ 2010թ., քանդել է Աֆրիկյանների տան տանիքը: Ըստ Կենտրոն վարչական շրջանի համար մշակված գոտիավորման նախագծի, նախատեսվում է Տերյան փողոցը և Նույն փողոցի շարունակությունը հանդիսացող Չափյան փողոցը միացնել միմյանց: Այս մտահղացումը քաղաքաշինության նախարար, Երևանի նախկին գլխավոր ճարտարապետ, ներկայիս ՀՀ քաղաքաշինության նախարար Նարեկ Սարգսյանինն է, ով ավելի վաղ պնդել է, թե Տերյան փողոցը նեղ է, ուստի պետք է հուշարձանը քանդելու հաշվին այն լայնացնել²:

Հաշվի առնելով այն, որ Աֆրիկյանների տունը ներառված է ՀՀ կառավարության 07.10.2004թ. թիվ 1616-Ն որոշման հավելված 2-ի տեղափոխման ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակում, տեղափոխման պատրվակով տեղի է ունենում պատմամշակութային հուշարձանի քանդում, ինչի մասին է վկայում այն փաստը, որ բացի հուշարձանի ճակատային մասից (իսկ հուշարձանը ամբողջական շենքն է և ոչ թե միայն ճակատը), մնացածն արդեն իսկ քանդվել է:

¹ Տես՝ <http://hetq.am/arm/news/3682/afrikyanneri-tuny-ochnchacman-vtangi-tak.html>
² Տես՝ <http://www.armtimes.com/hy/read/51999>

Հայաստան, Երևան 0025, Ալեքսանյանի 9 փող. տուն 6
 Հեռ.՝ (374 10) 569910, (37410) 553069 • Ֆաքս՝ (374 10) 571399
 info@transparency.am • www.transparency.am

Հանրապետական նշանակության հուշարձանի քանդումը հակասում է ԶՀ օրենքներին: Համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի **հուշարձանների քանդումն արգելվում է**: Նույն օրենքի 44-րդ հոդվածի համաձայն «Հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, հետախուզության և հնագիտական պեղումների, **ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման**՝ օրենսդրությամբ սահմանված կարգը չպահպանելու, ինչպես նաև հուշարձանների պահպանության և օգտագործման՝ օրենսդրության այլ խախտումների համար մեղավոր իրավաբանական և ֆիզիկական անձինք կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդպիսի պատասխանատվություն նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածով, այն է՝

«Հոդված 264. Պատմության և մշակույթի հուշարձաններ ոչնչացնելը կամ վնասելը

«1. Պետության պահպանության տակ գտնվող պատմության, մշակույթի հուշարձանները, ինչպես նաև պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները կամ փաստաթղթերը ոչնչացնելը կամ վնասելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են առանձնակի արժեք ունեցող օբյեկտների կամ հուշարձանների նկատմամբ՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին մասում նշված արարքները, որոնք կատարվել են անզուգուշությամբ եւ պատճառել են խոշոր վնաս՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի երրորդ մասում նշված արարքները, որոնք կատարվել են առանձնակի արժեք ունեցող օբյեկտների կամ հուշարձանների նկատմամբ կամ պատճառել են առանձնապես խոշոր վնաս՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»

Ինչ վերաբերում է հուշարձանի տեղափոխման նպատակին, որով պատճառաբանվում է ՀՀ կառավարության 25.01.2007թ. թիվ 107-Ն որոշումը և տեղափոխման նպատակով Աֆրիկյանների տան ճակատային քարերի համարակալումը, այն ինքնին անօրինական է և հակասում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային փաստաթղթերին: Մասնավորապես, 21.10.2008թ.-ին ԱԺ-ի կողմից վավերացված Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն **«Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է արգելել պահպանվող որևէ հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը, բացի այն դեպքի, երբ այդպիսի հուշարձանի նյութական պահպանությունը**

հրամայաբար պահանջում է այն տեղափոխել: Այս դեպքում, իրավասու մարմինը անվտանգության անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի՝ հարմար վայրում հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման և վերականգնման համար»: Հարկ է նկատել, որ Աֆրիկյանների շենքի տեղափոխման համար սույն կոնվենցիայով նախատեսված որևէ նախադրյալ առկա չէ և բերվող հիմնավորումները չեն բավարարում կոնվենցիայի դրույթներին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն «Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»:

Գտնում ենք, որ տվյալ պարագայում առկա է պատմության և մշակույթի հուշարձանը քանդելու (ոչնչացնելու) կամ վնասելու և/կամ անօրինական կերպով տեղափոխելու փաստը, որը քրեորեն հետապնդելի արարք, իսկ սույն հաղորդումը առիթ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելու համար:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի՝ քրեական գործ հարուցելու առիթներ են հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմին, քննիչին, դատախազին, ինչպես նաև հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները:

Նույն օրենսգրքի 180-րդ հոդվածի առաջին մասի համաձայն. «Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում»:

Քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հոդված 182):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում ենք օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ուսումնասիրել սույն հաղորդման մեջ ներկայացված փաստերը, հարուցել քրեական գործ և բացահայտել հանցագործության կատարման մեջ մեղավոր և հանցագործության կատարմանը նպաստող անձանց, այդ թվում՝ պետական մարմիններին և պաշտոնատար անձանց:

Ակնկալում ենք, որ սույն հաղորդումը համապատասխան ընթացք կստանա:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով՝



Կազմեց՝ Հ. Տիգրանյան